



Ն. ԿԱԼՄԱ

# ՍՈՒԼԻՇԸ



891-718.

4-15

ՊԵՏՎՐԱԾ

1935

ՅԵՐԵՎԱՆ

2014 08 05  
4-15

891.71.Ա Կ  
4-15



## Առիջը

Մի անգամ յերեք յերեխա՝ Բորյան, Պետյան  
և Միշան անցնում եյին այգու մոտից։ Տեսան  
ակացիայի մի ծառ։

— Յեկեք ճյուղեր կտրենք ու շվիկներ պատ-

րաստենք։

Բորյան մի բուռը կեղև հավաքեց. Ինքն ու  
Պետյան միջի հատիկները հանեցին և, պատյան-  
ները շվիկներ դարձրած՝ սկսեցին սուլել.

— Ֆյույ-ու... ֆյու-յու...

Այդ ձայնի վրա փողոցի անկյունից՝ դուրս  
թռավ մի մեծ հնդկահավ։ Ամբողջովին կարմրեց,

789

41



Քրվեց։ Հնդկահավերը շվշվոց չեն սիրում։ Նա  
մի ուժեղ ֆշոց քարձակեց տղաների կողմը և  
բարկացած ինչ-վոր բլբլաց։

— Խլբ-բլբ, բըլ-բըլ...

Իսկ Բորյան ու Պետյան ել հո չեն դադա-  
րում կատաղեցնում են հնդկահավին։ Միշան ծի-  
ծաղեց նրանց վրա։

— Այ թե ուրախացաք, հա, ձեր սուլոցով  
միայն կարող եք հնդկահավերին բարկացնել։  
Դրանք ինչ սուլիչներ են վոր։ Այ, իմ քեռին



մեկն ունի, նա իսկական սուլիչ եւ Սուլում ե թե  
չե՝ ամեն-ինչ կանգ ե առնում։ տրամվայները,  
ավտոբուսները, ավտոները, նույնիսկ մարդիկ —  
ամենքը լսում են նրան։

— Վնրտեղ ե ապրում քո քեռին։

— Ոյազանսկի փողոցում։

Բորյան սկսեց միտք անել, նույնիսկ դադա-  
րեց սուլել։ Նա շատ եր ուզում մի այնպիսի  
սուլիչ ունենալ, վոր բոլորը լսեն, — և մարդիկ,  
և մեքենաները։ Նա սկսեց հարց ու փորձ անել  
և իշային։

— Իսկ վնրտեղ ե այդ Ոյազանսկի փողոցը։

— Հեռու-Ռւ...

Միշան ձեռքով ցույց տվեց հեռուն։ Բորյան  
մտածեց. Ոյազանսկի փողոցն անպայման Ոյա-  
զան քաղաքում կինի։ Ուրեմն, յերկաթուղով  
պետք ե գնալ այնտեղ։


— Յես կզնամ քո քեռու մոտ, — ասաց նա։  
Յերեխաները ծիծաղեցին։

— Այ քեզ խենթ։

Բայց Բորյան արդեն ճանապարհ եր ընկել։  
Նա հասավ Ոյազանսկի կայարանը։ Այնտեղ  
ամենքը վագում են, աղմկում, ժամանակ չկա,  
շտապում են։ Անցնում են ապրանքով բեռնված  
սալլակները, ազդանշան տալիս։

— Եյ, ճանապարհ տներ։

Յուրաքանչյուրն աշխատում ե մյուսից ավելի  
բարձր ճաղլ։



— Մնաք բարով, մնաք բարով։ Նամակ կգը-  
րեք մեզ։

— Քաղաքացի, ցույց տվեք ձեր տոմսը։  
Հանկարծ ուժեղ սուլեց շոգեշարժը։

— Տու-տու-տու։

Բորյան վազեց դեպի պերրոնը։ Գուցե դա հենց  
այն սուլիչն ե, վոր իրեն պետք ե։ Այ թե հիմա,  
հանկարծ ամեն բան կանգնի, — և մարդիկ, և  
սայլակները, և գնացքները։ Բայց վոչ, ավելի  
շատ աղմուկ բարձրացավ, սկսեցին իրար հրա-  
ժեշտ տալ.

— Ցտեսություն, ցտեսություն։

— Զմոռանաս նամակ գրել։

Բորյան հառաջեց.

— Վոչ, դա այն սուլիչը չի։

Իսկ հիմա ել գնացքը շարժվեց, անիվսերն աղմը-  
կեցին. տակի-տակ, տոկի-տակ... գնացքը մեկնեց։  
Հանկարծ խոսեց պատից կախ տված սև ոռո-  
պորը.

— Լսեցե՛ք, լսեցե՛ք։ Հիմա, № յերկու պլատ-  
ֆորմից մեկնում ե № հարյուր յերեսուն յերկու  
գնացքը։ Տեղափորումն սկսվում ե։ Քաղաքացի-  
ներ, զրավեցեք ձեր տեղերը։

Բորյան վախեցավ։

«Իսկ ուր ե այդ պլատֆորմը։ Պետք ե շտապել,  
թե չե կուշանամ։ Շուտ, շուտ։ Վայ չմոռանամ։  
պլատֆորմ յերկու, գնացք հարյուր յերեսուն  
յերկու...»։



Նրա վոտը սայթաքեց և ինքն ել չնկատեց, վոր շփոթեց.

«Գնացք յերկու, պլատֆորմ հարյուր յերեսուն յերկու, գնացք յերկու, պլատֆորմ հարյուր յերեսուն յերկու...»

Դեմք յեկավ մի յերկաթուղային ծառայող՝ Բորյան դարձավ նրան.

— Քեռի ջան, այստեղ՝ ձեզ մոտ մը ե հարյուր յերեսուն յերկու պլատֆորմը:

— Ի՞նչ, զարմացավ յերկաթուղայինը:

Բորյան բոլորովին շփոթվեց:

— Ուր ե յերեսուն հարյուր յերկու պլատֆորմը:

— Վոչինչ չեմ հասկանում, — ձեռքերը թափահարեց յերկաթուղայինը: — Եղ մը ես գնում դու, տղաս: Մեզ մոտ փոքր յերեխաներին, առանց մեծերի, չի թույլատրվում գնացք նստել:

Բորյան բացատրեց նրան, վոր ինքն ուզում ե գնալ Ռյազան՝ սուլիչ բերելու: Այն սուլիչը, վորին ամենը լսում են:

— Ինչու այդքան հեռու գնալ: Դու մենակ ես, դու փոքրիկ ես դեռ, կարող ես կորչել, — ասաց յերկաթուղայինը: — Սուլիչ ինչքան ուզես՝ Մոսկվայումն ել կա: Այ, հենց վոր դուքս գանք կայարանից, յես քեզ տեղը ցույց կտամ, թե վորտեղ են վաճառվում այդպիսի սուլիչներ:

Նա բռնեց Բորյայի ձեռքից և դուքս բերեց կայարանում հավաքված ամբոխի միջից:

Կայարանից վհչ-հեռու կար մի մեծ կոլտնտեսային շուկա: Բոլոր կոլտնտեսականները՝ վորոնք գալիս եյին Ռյազանի ճանապարհով, իրենց ապրանքները բերում եյին այդ շուկան: Բորյան ել գնաց այնտեղ՝ յերկաթուղայինի հետ:

«Յեթե ամենը ել այնտեղ են գնում, ուրեմն յես Միշայի բեռուն ել կգտնեմ», — մտածեց Բորյան:

Քանի հեռու եյին գնում՝ այնքան ավելի շատ մարդկանց եյին հանդիպում ճանապարհին:

Իսկ յերբ հասան շուկա՝ ստիպված յեղան կանգ առնել: Շատ նեղվածք եր: Խառնվել եյին և մարդիկ, և ձիեր:



Վլրնջում եյին ձիերը: Բառաչում եյին կո-  
վերը:

— Բա-ա-ա, — մայում եյին վոչխարները:  
Ճվճվում եյին խողի ճուտերը. Ուիկուիկ:

Աղմկում եյին սագերը. Ղա-ղա.

Շուկայի կենտրոնում պտտվում եր մի մեծ  
նախշուն կարուսելք կարուսելի մոտ մեկը գար-  
մոշկա յեր նվազում ու յերգում.

Դու արի մեզ մոտ շուկա,  
Տես, թե ինչքան լավ բան կա  
Տես, այս լիբը սայլը մեր  
Կոլխոզն ե շուկա բերելք  
Այ քեզ կաղամբ, սելյոդկա,  
Ու վարունգ ել ինչքան կա:  
Տես, այս լիբը սայլը մեր  
Կոլխոզն ե շուկա բերելք

Բորյան բոլորովին զլուխը կորցրեց: Կանգնել  
ե կարուսելի մոտ և պինդ կպել յերկաթուղա-  
յինի ձեռքից. աչքերի առաջ գնում են ու գալիս  
մարդիկ, ձիեր, կառքեր: Յերկաթուղայինը շար-  
ժեց նրա ուսը.

— Գիտես, ավելի լավ ե տուն գնանք, թե չե  
այստեղ նեղվածք ե, շատ են դես ու դեն հրում:

Այդ ըոպեյին նրանց մոտից մի մարդ ան-  
ցավ՝ կավե խաղալիքներով լիբը մի տուփ ձեռ-  
քին: Նրա բերանին մի շվիկ եր դրած: Նա սու-  
լում եր ու կանչում.



— Այ լավ սուլիչ — հինգ կոպեկ: Մի արէ  
ու տես:

Բորյան հանկարծ բաց թողեց յերկաթուղա-  
յինի ձեռքը, խցկվեց ամբոխի մեջ և հասավ խա-  
ղալիք-վաճառողին:

— Քո սուլիչները լավի են: Խսկական են:

— Ամենալավի են: Զոկի՞ր, տղա, Զոկի՞ր:  
Բորյան սկսեց մեկ-մեկ փորձել սուլիչները:



Սուլում եր կավե շվիկը, կավե գառնուկը, խողուկը: Վո՞չ, վոչինչ չի դուրս գալիս: Մարդիկ նրան չեն լսում: Աղմկում են, դես ու դեն ընկնում, վազում՝ ինչպես առաջ: Բորյան յետ վերադրեց բոլոր շվիները:

— Վո՞չ, ձեր շվիները բանի պետք չեն: Դուք, ուրեմն, Միշայի քեռին չեք:

— Ի՞նչ քեռի, ի՞նչ բան: Ես ինչ ե, բոլոր շվիները խառնեցիր: — Բորյան թողեց, փախափ: Շուրջը փնտռում եր յերկաթուղայինին ու գոռում.

— Քեռի ջան, քեռի ջան, յես այստեղ եմ:

Բայց շուկայում այնպիսի աղմուկ ե, վոր նա ինքն ել իր ձայնը չի լսում: Մի քիչ ել փնտռելուց հետո՝ Բորյան վորոշեց.

— Գնամ ու Միշայից մեկ ել հարցնեմ իր քեռու հասցեն: Թե չե, եսպես յես սուլիչին չեմ համնի:

Դուրս յեկավ հրապարակ:

Զընգում են տրամվայները, զըրնգ-զըրնգ...

Աղմկում են ավտոբուսները, ու-ու-ու...

Իսկ ավտոները, շների նման հավ-հավ-հավ...

Բորյան ուղիղ առաջ ե գնում: Հանկարծ քթի տակ՝ մի ավտոմոբիլ: Բորյան մյուս կողմն ե վազում՝ այնտեղ ել տրամվայն ե:

— Վայ, տրամվայի տակ կընկնի: Վայ ուր փախչի: — Ճշում են անցորդներ: — Կանգնեցը քե՝ կանգ առեք:

Յեվ հանկարծ լսվեց մի խիստ ուժեղ, յերկարատև սուլոց: Կանգնիր:

Կանգ առան տրամվայները, կանգնեցին ավտոբուսները, անշարժացան ավտոները: Սկսեցին կանգ առնել և անցորդները: Այդ ի՞նչ ե: Ի՞նչ ե պատահել:

Իսկ Բորյային մոտենում ե միլիցիոները: Նա շատ բաղաքավարի յե ու խիստ: Նա ասում ե.

— Այ, դու: Քիչ մնաց, տրամվայի տակ

ընկնեյիր։ Միթե մանկապարտեզում ըեզ չեն  
սովորեցրել, թե ինչպես պետք է անցնել փո-  
ղոցով։

Ավտոբուսները, տրամվայները, ավտոները  
կանգնած են: Մարդիկ նայում են Բորյային:  
Բորյան ամաչում ե. այդ ինչպես յեղավ, վոր նա  
քիչ մնաց տրամվայի տակ ընկներ:

Իսկ գլխավորն այն ե, թե ինչպես նա առաջ գլխի շընկավ։ ԶԵ վոր իր ուզած սուլիչը հենց սա յե, վոր կա։ Քանի անգամ Բորյան լսել ե այդ սուլոցը, բայց ուշադրություն չի դարձրել։

Միլիցիոները բռնում ե Բորյայի ձեռքից և  
տանում դեպի մայթը:

— Անունդ ի՞նչ ե, տղաւ Սպասիր, կարծես  
թե յես ըեղ ճանաչում եմ։ Դու կարծեմ,  
իմ Միշայի հետ միևնույն խմբումն եք սովո-  
րում։

— Իսկ դուք Միշայի քեռին եք: Դուք Ռյազանսկի փողոցնմ եք ապրում: Յեվ դուք սումի՞չ ունեք:

Բայց այդ ըստելին Միշայի քեռին նորից ես սուլում, և նորից շարժվում են տրամփայները, ավտոները, ցըվում են անցորդները:

Միլիցիոները կռանում ե դեպի Բորյան:

— Հիշիր, ասում են նա խիստ ձայնով, — փողոցից կարելի յե անցնել միայն՝ անկյունին հասած, և միայն այն ժամանակ, յերբ սվետոփողի





Վրա կվառվի կանաչ կրակ: Դե՛մ, հիմա գնանք,  
յես քեզ կհասցնեմ տուն:

Սվետոփորի վրա կանաչ կրակ ե վառ-  
վում: Բորյան և Միշայի քեռին ազատ անց-  
նում են փողոցից: Բորյան գնում ե և ուրա-  
խանում. Վերջ ի վերջո նա գտավ այդ հրաշալի  
սուլիչը:

3574

1-32

23

20

9

9